



Ջ Գ Ը Բ Ը Ե Ո Ի Թ Ե Ը Ե Ս
ամբողջութեան քանի մը
համառօտ տեղեկութիւն-
ներ մնացին: Միհրան Պէյ
ամուսնացեալ էր՝ փողերա-
նոցի գանձապահ՝ Եաղըզ-
ճեան Պետրոս Էֆէնտիի 14-

ամեայ դստեր՝ Մարիոնքա Եւփրոսինէի հետ.
(1849 Յունուար 30:) Ղեց զաւակ ունեցաւ,
որոնցմէ չորս մանչ զաւակներն՝ Կ. Պոլսոյ հայ-
կաթողիկեայ հասարակութեան անուանիններկայ-
ացուցիչներէն են:

Առաջինն է Ղսեմ. Սերգիս Պէյ Տիւզ
(ծն. 1851, Փետրուար 15) որ 1875ին փո-
ղերանոցի գանձապետ անուանեցաւ: Երբ Միհ-
րան Պէյ 1876ին Եւրոպական երկիրներն ու-
ղեւորելու ելաւ՝ Բ. Գրան հրամանաւ Սերգիս
Պէյ փողերանոցի գործակալութեան փոխանորդ